



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 146-Ա
ք. Երևան

«ՀՈՎՆԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՀՈՎՆԵՏ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Բավարարել «ՀՈՎՆԵՏ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ՕՉԱՆՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 20
ք. Երևան

Հեռուստաաձրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«Կինոպրեմիերա» «Կինոխիտ»	31.12.2019թ.
«Բոկս ՏՎ» «Կինոկոմեդիա» «Ինդիյսկոյե Կինո» «Կուխնյա ՏՎ» «365 Դնեյ ՏՎ» «ՏՆՏ Մյուզիք»	31.12.2019թ.
«Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ» «Կարուսել Ինթերնեյշնլ» «Դոմ Կինո» «Բոբյոր» «Վրեմյա. դալոկոյե ի բլիզկոյե» «Տելեկաֆե» «Մուզիկա Պերվոգո»	31.12.2019թ.
«Շանթ»	անժամկետ